www.acrpc.am

Իրավական մշակույթ

Ձկա Հասարակություն առանց իրավունքի

Ubi societas ibi jus

երկշաբաթաթերթ
թիվ 13 (16)
2007 թ. հոկտեմբերի 31

ՄԻ՛ ԳՈՂԱՑԻՐ

Խարդախ կշեռքը պիղծ է Տիրոջ առջև,
բայց արդար կշեռքը հաճելի է Նրան:
Առակաց, 11:1

Հայտնի է, որ հասարակական ծառայությունների մատուցման ընթացքում դրանց «բարեխիղճ» աշխատակիցները հաճախ հայտնվում են մանրադրամ գրպանելու հաճելիով համեմված անխուսափելի «անհարմարության» մեջ՝ շնորհիվ մանրադրամի բացակայության «օբյեկտիվ» պատճառի:

Գիտե՞ն այդ մասին նրանց գործատուները: Անշուշտ: Ինչպե՞ս կարող են չիմանալ:

2007 թ. հոկտեմբերի 24-ին գնացի Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատուն, որպեսզի վիզա ստանալու համար փաստաթղթեր հանձնեմ: Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ վերցրել էի նաև մանրադրամ, քանզի դեսպանատան տեղեկատու թերթիկում պահանջվող փաստաթղթերի ցանկում նշված է նաև՝ «60 եվրոյին համարժեք դրամ»:

Երբ հայտնվեցի համապատասխան սրահում և ուզում էի այնտեղ գտնվողներից պարզել՝ իմ հերթը, աջակողմյան ապակեպատ խցի պատուհանից հայախոս մի պարոն դիմեց ինձ՝ խնդրելով իրեն ներկայացնել որոշ փաստաթղթեր և «քսանութ հազար դրամ վիզայի վճարը»: Ես դրանք ներկայացրի՝ մտածելով՝ «ինչ լավ է, կլորացրել են գումարը»: Միաժամանակ խնդրեցի վճարային փաստաթուղթ՝ հաշվապահություն ներկայացնելու համար: Եվ երբ ստացա այդ փաստաթուղթը, տեսա, որ այնտեղ գրված է՝ «Montant the orique: 27 778,00 AMD», որը, հավանաբար, նշանակում է, թե իբր «վճարված է՝ 27 778,00 դրամ»:

Բայց չէ՞ որ դա ճիշտ չէ: Ինչու՞ եք սուտ գրում: Ինչպե՞ս չեք ամաչում, երբ սուտ եք խոսում, երբ ավելի գումար եք պահանջում, քան սահմանված է: Չէ՞ որ դա գողություն է:

Եթե փորձենք որակել այդ համատարած և ամոթալի երևույթը, ապա այն ավելի ծանր իրավախախտում է, քան գողությունը, քանի որ ՀՀ Քրեական օրենսգրքով գողությունը սահմանվում է որպես «ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն» (հոդ. 177): Մինչդեռ ամենուրեք՝ այդ և զանազան ծառայություններ մատուցող հազարավոր տիկնայք ու պարոններ ճարպիկ գրպանահատների նման ձեռքները չեն խոթում մեր գրպաններն ու աննկատելիորեն թռցնում դրանց պարունակությունը: Նրանք բացահա՛յտ, հրապարակա՛վ, անթաքու՛յց, առանց ամաչելու՝ պահանջում են, քանզի «արտոնված» են այդ նույն «հաճելի» պատեհության «օբյեկտիվ» հիմքով: Նրանք ողորմություն կամ մարդասիրական օգնություն չեն խնդրում, այլ պահանջում են ու գրպանում: Հետևաբար, դա ավելի՛ն է, քան գողությունը: ՀՀ Քրեական օրենսգիրքն այդ գործողությունները որակում է որպեսկողոպուտ «ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն» (հոդ. 176):

Ամբողջ երկրում առօրյա, սովորական երևույթ է դարձել, երբ վաճառողն առանց աչքերը թարթելու և, որ շատ ավելի ցավալի է, առանց ամաչելու՝ հաշվիչ դրամարկղային մեքենայի հաշվարկած վճարման ենթակա հանրագումարը դեպի վեր կլորացրած է պահանջում գնորդից դրանով, փաստորեն, կողոպտելով նրան՝ այն «երջանիկ» անխուսափելի պատեհությամբ «ստիպված», որ «մանրադրամ չկա՛»:

Երևույթն, իսկապես, համատարած չարիք է, որը, ինչպես տեսնում ենք, թափանցել է անգամ միջազգային հաստատությունների անառիկ պարիսպներից ներս՝ ենթադրաբար, տեղական աշխատակիցների միջոցով:

Ո՞րն է այս չարիքի պատճառը, որը լռելյայն հանդուրժում է մեր հասարակությունը: Գուցե համատարած անտարբերությու՞նը: Անտարբերությունն արժանապատվության, բարոյական արժեքների խաթարումների նկատմամբ: Նյութական աշխարհի, մամոնայի օրենքների տակ գտնվող բարեկեցիկ զանգվածի համար այս երևույթը «խնդիր չէ»: Նրա խնդիրներն այլ հարթություններում են: Սակայն չնչին աշխատավարձերով, կենսաթոշակներով ու նպաստներով գոյատևողների համար դա լուրջ խնդիր է, երբ, օրինակ, կենսաթոշակների ու նպաստների մշտական թերավճարումները դարձել են չգրված օրենք:

Դարձյալ, ո՞րն է այս չարիքի պատճառը: Գուցե քրիստոնեական հավատքից ու բարոյականության սկզբունքներից հեռացու՞մը: Դժվար է վերջնական ախտորոշում կատարել: Սակայն ակնհայտ է հասարակության որոշակի մասի կողմից խնդիրը չընկալելու, չգիտակցելու խնդիրը:

Հիրավի, յուրաքանչյուր բարեպաշտ քաղաքացու համար պարզ է, որ մեր քրիստոնյա համարվող հասարակության մեջ ընդամենը երկու պատվիրանների պահպանումը բավական կլիներ, որ ոչ միայն այս հոռի երևույթն, այլև բազմաթիվ հասարակական չարիքներ վերանային, ու երկիրը կշենանար, կծաղկեր: Ընդամենը երկու պատվիրան. առաջինը՝ մի՛ գողացիր, երկրորդը՝ մի՛ ստիր:

Բավական կլիներ:

Կարո՞ղ եք, օրինակ, երևակայել այնպիսի իրավիճակ, երբ բոլոր քաղաքացիները, այդ թվում՝ պաշտոնյաները, պահպանում են այդ երկու պատվիրանները. ընդամենը չե՞ն գողանում և չե՞ն ստում: Իսկ դա նշանակում է, որ, օրինակ, հարկերը այլևս չեն թաքցվում, բյուջեն չի վատնվում... Աստված էլ ավելի բարեհաճ կլինի մեր երկրի ու ժողովրդի նկատմամբ, քանզի ապաշխարելով՝ մարդը նախ և առաջ կդադարի խաբել Աստծուն ու կդադարի գողանալ Նրա տասանորդները... Մեղավոր մի վիճակ, որը հարյուրամյակների պատմություն ունի և նաև եկեղեցու տկարության ակնհայտ պատճառներից մեկն է:

Ի գիտություն գործատուների, վաճառողների և այս խնդրով մտահոգ քաղաքացիների:

Մանրադրամի բացակայության հարցով հեռախոսով զրուցեցի ՀՀ Կենտրոնական բանկի վճարային համակարգերի և դրամաշրջանառության կարգավորման վարչության պետ

Գաբրիել Սունդուկյան

Իժում էն վոր՝ կշիռքը ձեռիտ վոր վիր էիր կալնում, մի՞տտ է, վոր ծկըտովդ քաշը ծռում էիր ու շատ ծախածի մագիեր առնողին քիչ էիր տալի՛...

պարոն Սուրեն Սիմոնյանի հետ: Նա ասաց, որ մանրադրամի՝ 1, 3 և 5 նիշանոց մետաղադրամների պակաս Կենտրոնական բանկը չունի: Յուրաքանչյուր իրավաբանական կամ ֆիզիկական անձ կարող է ԿԲ-ի հուշադրամների «Դրամագետ» վաճառասրահից անկաշկանդ գնել իրեն անհրաժեշտ քանակությամբ մանրադրամ: Բացի այդ՝ իրավաբանական անձինք կարող են իրենց սպասարկող առևտրային բանկերին պատվիրել, և վերջիններս պարտավոր են նրանց ապահովել համապատասխան նիշերի մանրադրամով:

Այս ախտը, որ ճարակել է ողջ երկիրը, նոր չէ մեր հասարակության համար: Երևույթը, ենթադրաբար, բովանդակում է նաև նյութական շահի գործոնը: Բայց որքան էլ մեծ լինի այդ անազնիվ «վաստակը», այն վիրավորանք է ոչ միայն յուրաքանչյուր սպառողի, գնորդի, այլև իր՝ վաճառողի՝ մարդկային պատվին, արժանապատվությանն ու նաև գործատուի համբավին ու հեղինակությանը:

Օսկան Պետրովիչի դժոխային փորձությունները պետք է դաս լինեն նրա ժամանակակից ժառանգներին, այլապես վաղ թե ուշ կսկսեն գործել վերը հիշատակված օրենսգրքերը:

Գևորգ Մանուկյան

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում — էջ 2
Իրավաբանների երիտասարդ սերունդը — էջ 3
Ելի՛ր և խոսի՛ր ընդդեմ աղքատության և անհավասարության — էջ 4
«Միա՛յն համակարգային խնդիրների լուծման միջոցով է հնարավոր նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը...» — էջ 5
Ովքե՞ր և ինչպե՞ս են դաստիարակում մեր երեխաներին — էջ 5
«Երդվում եմ կրել քեզ շնչո՛վս...» — էջ 6
Մորի Թառոյան. բանաստեղծություններ — էջ 6
Գյուտ Խաչի տոնի հաստատման պատմությունից — էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ — էջ 8

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

Նշվեց ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցության 15-ամյակը

Հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը նշեց Հայաստանի՝ ՄԱԿ-ի ընտանիքի լիիրավ անդամ դառնալու և Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի հիմնադրման 15-ամյակը, ինչպես նաև ՄԱԿ-ի հիմնադրման 62-րդ տարեդարձը:

Օրն սկսվեց ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի դիմաց դրոշի բարձրացմամբ՝ ՄԱԿ-ի մշտական համակարգող տիկին Կոնսուելա Վիդալի, գործակալությունների ղեկավարների և անձնակազմի, ինչպես նաև լրատվամիջոցների մասնակցությամբ:

Տիկին Վիդալը նշեց ՄԱԿ-ի օրվա կարևորությունը Հայաստանի, ինչպես նաև ողջ միջազգային համայնքի համար: Այնուհետև մասնակիցները հրավիրվեցին դիտելու ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի տեսաուղերձը օրվա և ՄԱԿ-ի հիմնադրման 62-րդ տարեդարձի կապակցությամբ:

Օրվա երկրորդ կեսը նշանավորվեց Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունում տեղի ունեցած լուսանկարների ցուցահանդեսով և նոր հրատարակված «ՄԱԿ-ը Հայաստանում - 15 տարի» գրքի շնորհանդեսով: Օրվա խորհրդի մասին խոսելով՝ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանն ընդգծեց այն ձեռքբերումները, որոնք Հայաստանն ունեցել է միջազգային համայնքի և մասնավորապես Միավորված ազգերի կազմակերպության օգնությամբ:

Միջոցառումները եզրափակվեցին համերգով՝ Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում՝ ՀՀ պետական կամերային նվագախմբի կատարմամբ:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ճանաչողական այցը Ստրասբուրգ

2007 թ. հոկտեմբերի 17-19-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավական կարգավորման գլխավոր տնօրինության պաշտոնական հրավերով, ճանաչողական այցով գտնվում էր Ստրասբուրգում: Եռօրյա այցի շրջանակներում պաշտպանը հանդիպումներ է ունեցել Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում մարդու իրավունքների ոլորտի կարևորագույն դերակատարների, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների ոլորտի բազմաթիվ պատասխանատուների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են մի շարք միջազգային համաձայնագրերով և պայմանագրերով Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, ինչպես նաև երկրում մարդու իրավունքների ոլորտին վերաբերող արդիական հիմնահարցերը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ուղերձը աղքատության հաղթահարման օրվա կապակցությամբ

2007թ. հոկտեմբերի 17-ին նշվեց աղքատության հաղթահարման միջազգային օրը: Իր ուղերձում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը կոչ արեց միջազգային հանրությանը համագործակցել այն հարցում, որ հարուստ երկրները աղքատ երկրներին միջոցներ տրամադրեն և հնարավորություններ ստեղծեն նրանց բնակչության զբաղվածության խնդրի լուծման համար՝ ապահովելով նրանց կապը միջազգային շուկաների հետ: Նա հայտարարեց. «Այսօր աշխարհը պետք է իր ուշադրությունն ու միջոցներն ուղղի դեպի մոռացված տարածքներն ու մարդիկ»:

Նշվեց նաև, որ առաջընթաց է գրանցվել այս առումով, և ընդհանուր առմամբ աշխարհում աստիճանաբար հաղթահարվում է աղքատությունը, սակայն առաջընթացն ամենուր չի դրսևորվում:

«Եկեք քաղաքական կամք ցուցաբերենք, որպեսզի մի անգամ և ընդմիշտ վերացնենք այդ աղետը՝ աղքատությունը»,- ասվում է ուղերձում:

Մերժում ու հապաղում ... արդյունքում՝ մարդկային ընդհատված կյանքեր

«Երուսաղեմի իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում են առողջական խնդիրներ և շտապ բուժօգնության կարիք ունեցող մարդկանց ելքը Գազայի գոտուց»,- ասել է Մարդու իրավունքների դիտակը: Հունիս ամսից սկսած ելքի թույլտվություն չստացած երեք հիվանդներ մահացել են, և որոշները, որոնց չի ցուցաբերվել համապատասխան բուժօգնություն, ստացած վնասվածքների և հիվանդության պատճառով կորցրել են տեսողությունը կամ վերջույթները:

Մարդու իրավունքների դիտակը մտահոգություն է հայտնել, որ Համասի վրա ճնշում գործադրելու նպատակով Գազա և Գազայից դուրս մարդկանց տարհանման և ապրանքների փոխադրումների արգելքներով Երուսաղեմը խախտում է միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը:

Խոշտանգումներ Վրաստանի ազատազրկման վայրերում

Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) 2007 թ.-ի մարտ-ապրիլ ամիսներին Վրաստան կատարած իր երրորդ այցի արդյունքներն ամփոփող զեկույց է հրապարակել:

Վրաստանում իրավիճակը՝ ձերբակալված մարդկանց հանդեպ վերաբերմունքի առումով, զգալիորեն բարելավվել է, ինչն արդյունք է վերջին տարիների ընթացքում ձեռնարկված մի շարք քայլերի՝ ոստիկանության անձնակազմի ընտրության և վերապատրաստման նոր մոտեցում, ներքին վերահսկողության ու արտաքին մոնիտորինգի մեխանիզմների զորացում:

Ազատազրկման վայրերի համակարգում կոռուպցիայի մակարդակի նվազում է նկատվել: Այնուամենայնիվ, կալանավորների թվի կտրուկ աճը, որն ավելի քան կրկնապատկվել է ԽԿԿ-ի նախորդ 2004 թ.-ի այցից հետո, ի չիք են դարձնում պատշաճ ուղղիչ համակարգ ստեղծելու բոլոր ջանքերը: Անհավանական «գերբնակեցում» է արձանագրվել Թբիլիսիի թիվ 5 կալանավայրում, ուր 1 կալանավորի հաշվարկով առկա է 0.5 մ^2-ից ավելի քիչ տարածք: Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն կոչ է արել վրացական իշխանություններին կրկնապատկել ջանքերն այս հարցի լուծման ուղղությամբ՝ մասնավորապես կալանավայրեր ուղարկվող մարդկանց թիվը նվազեցնելու քաղաքականություն որդեգրելու միջոցով:

Դիտորդված հինգ ուղղիչ հաստատություններից չորսում անձնակազմի կողմից կալանավորների ֆիզիկական խոշտանգումների մասին հայտարարություններ չեն եղել: Այնուամենայնիվ, Ռուսթավիի թիվ 6 կալանավայրում բազում վկայություններ են եղել տարբեր պատճառներով կալանավորներին ծեծի ենթարկելու մասին: Կոմիտեն տեղեկացրել է կալանատան տնօրինությանը, որ կալանավորների նկատմամբ ֆիզիկական կոպիտ վերաբերմունքը և վիրավորանքները, ինչպես նաև անհարգալից և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի այլ դրսևորումներն անընդունելի են:

Զինված բախումները խլում են երեխաների մանկությունը

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ երեխաների և զինված բախումների հարցերով հատուկ ներկայացուցիչն ընդգծել է զինված ընդհարումների կործանարար ազդեցությունը երեխաների վրա:

Վերջին տասնամյակում զինված բախումներն ավելի դաժան ազդեցություն են ունեցել երեխաների վրա, քան երբևէ:

Պատերազմների պատճառած վնասը չի սահմանափակվում սոսկ զինված հարձակումներով. երեխաներին ճարակում են նաև թերսնումը, հիվանդությունները, տեղահանումն ու աղքատությունը:

Զեկույցը կոչ է անում ՄԱԿ-ի անդամ երկրներին՝ կատարելու երեխաների առջև ստանձնած իրենց պարտավորությունները՝ ապահովելով նրանց համար կրթության, սննդի, խմելու մաքուր ջրով ապահովման և առողջապահության պատշաճ ծառայությունները, ինչպես նաև աշխարհի ավելի քան 50 հակամարտության գոտիներում պաշտպանելով երեխաների իրավունքները:

Ութ սպանված և տասը վիրավոր լրագրողներ՝ մեկ տարում

Կառավարությունը պետք է պաշտպանի և հարգի լրատվամիջոցների խոսքի ազատությունը

«Սոմալիի կառավարության կողմից լրագրողների վրա կատարվող պարբերական հարձակումները և ութ լրագրողների սպանության հարցով տարվող հետաքննության ձախողումը խորապես խաթարել են Սոմալիի լրատվության անկախությունը»,- հայտնել է Մարդու իրավունքների դիտակ (Human Rights Watch) միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը:

Հոկտեմբերի 19-ին երկու անհայտ զինված անձինք մոտ տարածությունից կրակել են լրագրող Բաշիր Նուր Գեդիի վրա, ով 2007 թ.-ին Սոմալիում սպանված արդեն 8-րդ լրագրողն էր: Ավելի քան տասը լրագրողներ վիրավորվել են: 2007 թվականը դարձել է Սոմալիի լրատվամիջոցների համար ամենավտանգավոր տարին:

Անվտանգությունը խոսքի ազատության սահմանափակում չի ենթադրում

2007-ի ապրիլին սիրիական դատարանը հինգ տարվա ազատազրկման դատապարտեց երկրի մարդու իրավունքների ճանաչված պաշտպան Անվար Ալ Բունիին. նա հայտարարել էր, թե սիրիական բանտի անմարդկային պայմանների պատճառով մահացել է մեկ կալանավոր:

«Սիրիական իշխանությունները չպետք է սահմանափակեն մարդու իրավունքների պաշտպանության ակտիվիստների՝ արտահայտվելու և միավորումներ կազմելու ազատությունը»,- նշել է Մարդու իրավունքների դիտակն իր զեկույցում:

Սիրիայի անվտանգության աշխատակիցները պարբերաբար անհանգստացնում են ակտիվիստներին՝ ձերբակալելով նրանց և խոչընդոտելով նրանց հանդիպումները, ազատ տեղաշարժը: «Այս միավորումները գործում են առանց օրինական կարգավիճակի՝ մշտապես գտնվելով փակվելու վտանգի տակ»,- ասել է Մարդու իրավունքների դիտակի Միջին Արևելքի ներկայացուցիչ Սարա Ուիթսոնը՝ ավելացնելով. «Նրանք չեն կարողանում անգամ հանդիպումների համար տարածք վարձել, իսկ ովքեր համարձակվում են փաստագրել կառավարության խախտումները, մեղադրվում են այնպիսի հանցանքի կատարման մեջ, ինչպիսին է՝ «կեղծ լուրերի տարածումը»:

Մենք՝ քաղաքացիական հասարակությունը

Իրավաբանների երիտասարդ սերունդը

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ), որը կայացած մի հզոր կառույց է և իր ուրույն դերակատարումն ունի Հայաստանի հանրապետության հասարակական կյանքում, գործունեության արդեն տասներկու տարիների պատմություն ունի: Հիմնադրվել է Երևանում 1995 թ.-ին պետական համալսարանի մի խումբ իրավաբան ուսանողների կողմից, ովքեր նպատակ ունեին օժանդակել Հայաստանի կայացմանը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, նպաստել երկրում մարդու իրավունքների պաշտպանությանն ու քաղաքացիական հասարակության կայացմանը: Ստեղծման օրից կազմակերպությունը որդեգրեց լուրջ առաքելություն և սկսեց հետևողականորեն աշխատել ՀՀ իրավական ու հասարակական դաշտում ի նպաստ բնակչության իրավունքների պաշտպանության, երիտասարդ իրավաբանների զարգացման ու ժողովրդավարության կայացման: Շուտով ՀԵԻԱ-ն ընդլայնեց գործընկերների շրջանակն ու գործունեության աշխարհագրությունը՝ հիմնելով գրասենյակներ Հայաստանի մարզերում ևս, որը թույլ տվեց կազմակերպության ծառայությունները մատչելի դարձնել նաև Հայաստանի մարզերի բնակչության համար: Այժմ ՀԵԻԱ-ի գրասենյակները գործում են Գյումրիում, Վանաձորում, Գավառում, Իջևանում, Գորիսում և Կապանում:

ՀԵԻԱ-ի գործունեության հիմնական ուղղություններն են մարդու իրավունքների պաշտպանությունն ու բնակչության իրավագիտակցության բարձրացումը, Հայաստանում փաստաբանական ինստիտուտի կայացմանն աջակցությունը, երիտասարդ իրավաբանների նոր սերնդի զարգացմանը և քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստելը:

ՀԵԻԱ-ն իր գրասենյակների ցանցի միջոցով տարիներ շարունակ անվճար իրավաբանական խորհրդատվություն և իրավական իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ է իրականացրել Հայաստանում: Յուրաքանչյուր տարի ՀԵԻԱ-ի օգնությանն են դիմում 8000-ից ավելի քաղաքացիներ, ովքեր վճարովի իրավաբանական ծառայություններից օգտվելու հնարավորություն չունեն: Վերջին տարիներին ՀԵԻԱ-ն տպագրել և անվճար տարածել է մոտ 100 անուն տեղեկատվական թերթիկներ՝ յուրաքանչյուրից 5000 օրինակ, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, դրանց պաշտպանության մեխանիզմներին, մի շարք պետական կառույցների և դրանց գործունեությանը: ՀԵԻԱ-ն լայնածավալ իրավական իրազեկման ծրագիր իրականացրեց նաև 2007 թ.-ի Աժ ընտրությունների ընթացքում՝ իրազեկելով բնակչությանն ընտրական իրավունքների և ընտրական գործընթացի վերաբերյալ:

Իրավաբան ուսանողներին ուղղված ծրագրերի արդյունավետության, ՀԵԻԱ գործունեությանը նրանց անմիջական ներգրավվածության բարձրացման և իրավագիտությանը գործնականում ավելի հաղորդակից դարձնելու նպատակով ՀԵԻԱ-ն 2003-ին ստեղծեց իր ստորաբաժանումներից մեկը՝ Իրավաբան ուսանողների բաժանումը (ԻՈՒԲ), որը նպատակ ունի նպաստել իրավաբան ուսանողների հաղորդակցությանը իրավագիտության զարգացման միջազգային փորձին, բուհերի իրավաբանական ֆակուլտետներում իրավաբանական կրթության որակի բարձրացմանը: ԻՈՒԲ-ի հետ համատեղ ՀԵԻԱ-ն այս ուղղությամբ պարբերաբար կազմակերպում է արդեն ավանդական դարձած իրավաբան ուսանողների գիտաժողովները փաստաբանության, սահմանադրության, դատական համակարգի տարբեր թեմաներով: Գիտաժողովները մղում են իրավաբան ուսանողներին մասնագիտական լուրջ հետազոտություններ կատարել և կազմել զեկույցներ այս կամ այն թեմայի շուրջ, արտահայտել իրենց սեփական դիրքորոշումներն ու մոտեցումները: Իսկ լավագույն զեկույցները կազմակերպության օժանդակությամբ տպագրվում են ժողովածուների տեսքով և բաշխվում շահագրգիռ կառույցներին ու անձանց: ՀԵԻԱ-ն պարբերաբար կազմակերպում է մասնագիտական սեմինարուսուցումներ իրավաբան ուսանողների համար: ՀԵԻԱ-ում գործում են նաև 5 մասնագիտական հանձնաժողովներ և երկու ակումբներ:

ՀԵԻԱ-ի նախագահ Կարեն Զադոյան

ՀԵԻԱ-ի կարևոր ծրագրերից է «Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը, որն Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի կողմից կազմակերպվում է 1959 թ.-ից ամբողջ աշխարհում, իսկ Հայաստան ներմուծվել է 2001 թ.-ից: Յուրաքանչյուր տարի իրավաբան ուսանողները Հաագայի դատարանի օրինակով բանավիճում են ենթադրական գործի շուրջ՝ ներկայացնելով տարբեր երկրներ: Մրցույթի շնորհիվ իրավաբան ուսանողները խորացնում և ամրապնդում են միջազգային իրավունքի նորմերի ու դրույթների իրենց իմացության մակարդակը, զարգացնում են փաստաբանական գրավոր և բանավոր հմտությունները: Իսկ հաղթող բուհի թիմը ամեն տարի՝ գարնանը, Վաշինգթոնում մասնակցում է մրցույթի միջազգային եզրափակիչ մրցափուլին՝ ներկայացնելով Հայաստանը: ՀԵԻԱ-ն հիմնադրել է նաև Հայաստանի Զեսափի ակումբը, որը համախմբում է ջեսափականների, որոնք տարբեր տարիների մասնակցել են մրցույթին՝ որպես թիմի անդամներ կամ դատավորներ:

ՀԵԻԱ-ն ունի հարուստ իրավաբանական գրադարան և ՀՀ օրենսդրության էլեկտրոնային համակարգ, որոնցից օգտվում են Երևանի և մարզերի երիտասարդ իրավաբանները:

2006 թվականից ՀԵԻԱ-ն հրատարակում է իր ամենամյա պարբերականը՝ «Իրավաբանական լրատուս», որն ընթերցողներին է ներկայանում մասնագիտական հետաքրքիր հարցազրույցներով, միջազգային փորձը ներկայացնող տեսակետներով, իրավաբանների գիտակրթական նշանակություն ունեցող հոդվածներով, ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության հաջողված օրինակները լուսաբանող և դատական համակարգի գործունեության թափանցիկության ապահովմանը նպաստող նյութերով: Այն անվճար տարածվում է փաստաբանների, դատավորների, իրավաբանական կառույցների ու երիտասարդ իրավաբանների շրջանում:

ՀԵԻԱ-ի գործունեության թափանցիկության ապահովման և կազմակերպության վերաբերյալ տեղեկատվության տարածման նպատակով ՀԵԻԱ-ն գործարկում է իր երկլեզու պաշտոնական վեբ կայքը՝ www.ayla.am, որը պարբերաբար թարմացվում է և թույլ է տալիս այցելուներին ստանալ կազմակերպության գործունեության վերաբերյալ և արդիական այլ իրավաբանական բնույթի տեղեկություններ:

Ամենամյա ինքնագնահատման ու պլանավորման գործընթացներից բացի՝ 2006 թ.-ին կազմակերպությունն անցավ արտաքին անկախ գնահատում: Գնահատվեց կազմակերպության հզորությունն ու կայունությունը, նրա դերակատարումն ու արդյունավետությունը Հայաստանի իրավական դաշտում և մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, միավորելով իր անդամների ու գաղափարակիցների ջանքերը, նոր շնչով ու ոգևորությամբ անշահախնդրորեն կշարունակի աշխատել ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության, իրավունքի գերակայության ու իրավական պետության կայացման ուղղությամբ:

Կենտրոնական գրասենյակ
ք. Երևան, Նալբանդյան 7/2,
Հեռ.՝ 540199
Հեռապատճեն՝ 580299
էլ. փոստ՝ ayla@ayla.am

Հոգևոր արժեքներ



Մարդու իրավունքների գրադարանում ստացվել է Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութեան «ՀԱՍԿ» ամսագրի 8-րդ համարը:

«ՀԱՍԿ»-ում տեղ են գտել Կոմիտաս արք. Օհանյանի, Թամար Տասնապետյանի, Վաղինակ վրդ. Մելոյանի, Զարեհ արք. Ազնավորյանի, Նարեկ եպս. Ալէքմէզյանի, Հուրի Ազէզյանի, Խաչիկ քհն. Ռուզյանի և այլ հոգևորականների կողմից թարգմանված և հեղինակած քարոզախոսական, հայրաբանական, մեկնաբանական, աստվածաբանական, պատմա-ուսումնասիրական, երիտասարդական, մշակութային խորագրերի ներքո զետեղված նյութեր, որոնք ներկայացնում են հայ եկեղեցու պատմությունը, քրիստոնյա կրոնը՝ համեմված առակներով և աստվածաշնչյան հղումներով:

Ուխտագնացություն դեպի Վիրահայոց թեմ

Թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը ջերմորեն ընդունում է ուխտագնացներին

Թիֆլիսը հարյուրամյակներ շարունակ անդրկովկասյան երկրների համար մշակութային կենտրոն է եղել, այդ երկրների ժողովուրդների բարեկամության և միասնության դարբնոցը: Այնտեղ գործել են 29 հայկական եկեղեցիներ, որոնցից այսօր ընդամենը երկուսն են մնացել:

Վերջերս Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի օրհնությամբ ու առաջնորդությամբ և օժանդակությամբ Սբ. Աստվածածին եկեղեցու խաչքավոր Արմեն Մխոյանի, Վանաձորի Սբ. Գր. Նարեկացի առաջնորդանիստ եկեղեցու երգչախումբը մեկնեց Վիրահայոց թեմ՝ ուխտագնացության:

Ուխտավորների առաջին հանգրվանը Թիֆլիսի Սբ. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին էր, ուր նրանց ընդունեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը՝ ներկայացնելով եկեղեցու պատմությունն ու վիրահայերի խնդիրները:

Ուխտավորներն այցելեցին նաև Թիֆլիսի հայկական պանթեոն, ուր հանգչող հայ մեծանուն գործիչների հոգիների հանգստության համար առաջնորդ հայրերը հոգեհանգստի արարողություն կատարեցին: Վերջում երգչախմբի մեներգիչ Արմեն Ներսիսյանը Զիվանու շիրիմի մոտ կատարեց նրա ստեղծագործություններից:

Երեկոյան արդեն Թիֆլիսի Սբ. Գևորգ եկեղեցում երգչախումբը հանդես եկավ համերգային ծրագրով, որին ներկա էին մտավորականներ, մշակութային գործիչներ, արվեստասեր հասարակություն. բոլորն անչափ տպավորված էին և, ինչպես խոստովանեցին, կարոտ հայկական մեղեդիների ու ելևէջների:

Հաջորդ օրը Գուգարաց և Վիրահայոց թեմերի հոգևոր դասերի, Վանաձորի Սբ. Գր. Նարեկացի եկեղեցու հովիվ Տեր Վահան քահանա Ազարյանի կողմից և երգչախմբի մասնակցությամբ մատուցվեց սուրբ և անմահ պատարագ, որի ավարտին սրբազան հայրերը հոգեհանգստի կարգ կատարեցին Սայաթ-Նովայի հոգու փրկության համար:

«ԵԼԻ՛Ր ԵՎ ԽՈՍԻ՛Ր ԸՆԴԴԵՄ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ»

2005 թ. Պորտո Ալեգրեում համաշխարհային սոցիալական ֆորումի ժամանակ սկիզբ առավ «Աղքատության հաղթահարման համընդհանուր քարոզարշավ» շարժումը, որն այսօր աղքատության դեմ պայքարող ամենամեծ համաշխարհային դաշինքն է:

2007 թ. հոկտեմբերի 16-17-ին ինչպես աշխարհի տարբեր երկրներում, այնպես էլ Հայաստանում կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ: Աղքատության և անհավասարության դեմ պայքարի հայաստանյան կոալիցիան տարբեր մարզերից համախմբել էր մի քանի հազար մարդկանց և հասարակական կազմակերպությունների «Ելի՛ր և խոսի՛ր ընդդեմ աղքատության և անհավասարության» կարգախոսի ներքո: Ակցիան լուսաբանում է «Իրավական մշակույթի» խմբագիր Հերմինե Բաբուռյանը:

Հոկտեմբերի 17-ին Հայաստանի տարբեր մարզերից և Երևանի համայնքներից ժամանած ակտիվիստները քայլերթով ուղղվեցին դեպի Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի Երիտասարդության զբոսայգի, որտեղ համերգային ծրագիր էր նախատեսված՝ աղքատության և անհավասարության դեմ պայքարի նշանաբանով: Հազարավոր մարդիկ պաստառների, շապիկների ու թևկապերի վրա գրված կոչերով ու նշանաբաններով հանրության և կառավարության ուշադրությունը հրավիրեցին մեր իրականության խոցելի կողմերից մեկի վրա՝ նպատակ հետապնդելով բարձրացնել հասարակության իրազեկության մակարդակը: Ակցիայի խորհրդանիշ էր ընտրվել «սպիտակ ժապավենը»՝ որպես շարժման համընդհանուր բնույթի մասին վկայող խորհրդանիշ:

Կոալիցիայի անունից ասված բացման խոսքում «Հույսի կամուրջ» ՀԿ ծրագրերի համակարգող Լիլիթ Ստեփանյանը կարևորեց համանման շարժումների դերը՝ որպես աղքատության նվազեցման էական գործոն: Ներկայացվեցին կոալիցիայի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, որից հետո իրենց երաժշտական ողջույններով և աղքատության դեմ գործողություններ ձեռնարկելու կոչով հանդես եկան երաժշտական «Բամբիռ», EMPIREY խմբերը, Սուսաննա Պետրոսյանը, Հասմիկ Կարապետյանը, Աննա Խաչատրյանը և ուրիշներ:

«Աղքատության հաղթահարման համընդհանուր քարոզարշավ» շարժման ազգային կոալիցիայի գործունեության, նպատակների և խնդիրների մասին տեղեկույթ ստանալու նպատակով զրուցեցինք շարժման մասնակից հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ
«Հույսի կամուրջ» ՀԿ ծրագրերի համակարգող

Հերմինե Բաբուռյան - Ե՞րբ է հիմնադրվել «Աղքատության հաղթահարման համընդհանուր քարոզարշավ»-ի ազգային կոալիցիան:
Լիլիթ Ստեփանյան - Աշխարհում կոալիցիան հիմնադրվել է 2005թ., և նույն թվականի մայիսին Հայաստանում գործող տասը հասարակական կազմակերպություններ միավորվել են՝ ստեղծելով ազգային կոալիցիան:
Այդ կազմակերպություններն են՝
«Ապագա սերունդ» ՀԿ
«Ապավեն համայնքներին» ՀԿ
«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
«Կամք և կորով» ՀԿ
«Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ
«Հույսի կամուրջ» ՀԿ
«Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ» ՀԿ
Շիրակի մարզի Հասարակական կազմակերպությունների միություն
«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Օքսֆամ ՄԲ հայաստանյան մասնաճյուղ:

Հ. Բ. - Աշխարհում քանի՞ մարդ է մասնակցում այս շարժմանը:
Լ. Ս. - Անցյալ տարի շարժմանը մասնակցել է 23,5 մլն մարդ: Նպատակ ունենք, որ աշխարհում 58 մլն մարդ ոտքի կկանգնի այս օրը: Այս շարժման շրջանակներում շուրջ 110 երկրներում այսօր նախատեսվում են բազմաթիվ միջոցառումներ:

Հ. Բ. - Իսկ մասնավորապես Հայաստանում քանի՞ մարդ է մասնակցում:
Լ. Ս. - Միայն մարզերից մոտ 1000 մարդ է եկել ու մասնակցում է ակցիային:

Հ. Բ. - Ի՞նչ խնդիրներ կան ձեր գործունեության շրջանակներում:
Լ. Ս. - Այս տարի մեր քարոզարշավը հիմնականում ուղղված է կրթության և առողջապահության ոլորտներին հատկացվող պետական ֆինանսավորման ավելացմանը: Իսկ ընդհանրապես շարժման նպատակներն են՝ աղքատ երկրների ուսերին ծանրացած պարտքի ներում, կլիմայական պայմանների բարելավում, աղքատության և անհավասարության վերացում և այլն:

Հ. Բ. - Ի՞նչ կոնկրետ գործողություններ եք նախաձեռնում:
Լ. Ս. - Ուղերձ ենք նախապատրաստել կառավարությանը՝ կոչ անելով, որպեսզի վերանայվի պարենային զամբյուղի պարունակությունը, աղքատության շեմը:

Հ. Բ. - Ըստ ձեր ուսումնասիրությունների՝ քանի՞ տոկոս է կազմում աղքատությունը Հայաստանում:
Լ. Ս. - Մոտ 29%:

Հ. Բ. - Իսկ ո՞րն է համանման շարժումների դերը:
Լ. Ս. - Այսպիսի շարժումների միակ դերը մարդկանց

համախմբելն է:
Հ. Բ. - ... և ուշադրություն հրավիրելը:
Լ. Ս. - և ուշադրություն հրավիրելը: Օրինակ՝ երեք տարի Հայաստանում այս կոալիցիան կա, բայց ես հուսով եմ, որ այս տարի մարդիկ արդեն կիմանան, որ նման կոալիցիա գոյություն ունի, որովհետև մինչև հիմա կազմակերպված և իրականացված միջոցառումները նման հնչեղություն չեն ունեցել: Կարծում եմ՝ մարդիկ արդեն բավականին իրազեկված են:

ՊՅՈՏՐ ՄԱՂԴԱՇՅԱՆ
Օքսֆամ բրիտանական բարեգործական միջազգային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ծրագրերի լրատվական քաղաքականության աշխատակից, ՁԼՄ-ների գծով պատասխանատու

Հ. Բ. - Արդեն տեղյակ ենք, որ երեք տարի առաջ աղքատության հաղթահարման հարցերով ազգային կոալիցիա է ձևավորվել. ձեր եռամյա գործունեության ընթացքում ինչքանո՞վ եք կարողացել նպաստել խնդրի լուծմանը:
Պ. Մ. - Կարծում եմ՝ մի քիչ սխալ կլինի հարցն այդպես դնել: Կարելի է ասել՝ մեր կոալիցիայի գործունեության ակտիվ փուլն սկսվել է այս տարի. մինչ այդ մեր գործունեությունն ավելի շատ նախապատրաստական աշխատանքներին էր ուղղված: Հուսով եմ՝ Հայաստանի համար իրական, տեսանելի, լսելի ակցիա-միջոցառում կազմակերպեցինք: Չեմ կարծում, թե երբևէ կկարողանանք ասել, որ հստակորեն մեր կոալիցիայի գործունեության, աշխատանքների շնորհիվ մարդկանց որոշակի խումբ դադարեց լինել աղքատ: Մեր գործունեության նպատակը փոքր-ինչ այլ է, այն նպատակադրված չէ մարդկանց օգնություն բաժանելու: Կոալիցիայի նպատակներն են՝ քաղաքականությունների փոփոխություն, սահմանադրական օրենսդրական փոփոխություններ, կառավարության ուշադրության ավելացում: Անհրաժեշտ է, որ կառավարությունը հաշվի առնի մարդկանց խոսքն ու պահանջները, իրագործի դրանք, օրինակ՝ աղքատության նվազագույն շեմի բարձրացման պահանջը բավարարի: Այս դեպքում, իմիջիայլոց, աղքատ մարդկանց թիվը գուցե կտրուկ բարձրանա, այսինքն՝ այն մարդիկ, ովքեր այսօր էլ ապահով չեն, սակայն պաշտոնապես չեն համարվում անապահով, մայիսի 1-ին, երբ բարձրանա ներքին շեմը, անմիջապես անապահով համարվեն: Սա նպաստելու է մեր գործունեությանը. դրա արդյունքում կհասնենք նրան, որ աղքատության կարգավիճակ չունեցող անապահով մարդիկ համապատասխան կարգավիճակ ստանան, իսկ նրանց խնդիրները կառավարության համար ավելի տեսանելի լինեն:

Հ. Բ. - Որքանո՞վ հույս ունեք հասնել նվազագույն շեմի բարձրացմանը:
Պ. Մ. - Չեմ կարող ասել. պետք է աշխատենք կառավարության հետ, միջազգային և հայաստանյան կազմակերպությունների հետ: Պետք է աշխատենք թե՛ նվազագույն շեմի բարձրացման, թե՛ պետական բյուջեից առողջապահական և կրթական ոլորտներին հատկացվող միջոցների ավելացման ուղղությամբ: Կարծում ենք՝ շատ քիչ գումար է ծախսվել բյուջեից կրթության և առողջապահության ոլորտներում: Դա հիմնական խնդիրն է:

Հ. Բ. - Ձեր գործունեությունը նպատակամետ է աղքատության և անհավասարության դեմ պայքարում: Եթե աղքատության դեմ պայքարի միջոցները նյութական են, ապա որո՞նք են անհավասարության դեմ պայքարի միջոցները:
Պ. Մ. - Նույնը: Խոսքն այն մասին է, որ վերանա սոցիալական բևեռացումը, և երկրի եկամուտների բաշխումը կատարվի արդար:

Հ. Բ. - Եթե այլ կազմակերպություններ ևս ցանկություն ունեն միանալ այս կոալիցիային...
Պ. Մ. - ... ապա կարող են դիմել նաև Օքսֆամին: Շուտով՝ մինչև այս տարվա վերջը, մենք կունենանք նաև ինտերնետային կայք, որի միջոցով նույնպես կարելի է տեղեկույթ ստանալ:

«ՄԻԱ՝ՅՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ Է ՀՆԱՐԱՎՈՐ ՆՎԱԶԵՑՆԵԼ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ...»

2007 թ. հոկտեմբերի 31-ին Լոռու մարզպետարանի նիստերի դահլիճում կայացավ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՀՀ Կառավարության համատեղ «Իրազեկման և հակազդեցության բարելավում Հայաստանում կոռուպցիայի բացահայտման գործընթացում» ծրագրի կրթության և առողջապահության ոլորտներում իրականացված մասնակցային մոնիտորինգի ամփոփիչ հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին մոնիտորինգի համար ընտրված թիրախ հաստատությունների ներկայացուցիչներ, մոնիտորինգն իրականացնող քաղաքացիական հասարակության խմբի անդամներ, մարզպետարանի կրթության և առողջապահության բաժնի աշխատակիցներ, ինչպես նաև տեղական հեռուստաալիքների ներկայացուցիչներ, թերթերի խմբագիրներ:

Ողջույնի խոսքով հանդես եկան Լոռու մարզպետի տեղակալ Զ. Թորոսյանը, ՀՄԿ նախագահ Գ. Մանուկյանը, իսկ ծրագրի մարզային համակարգող Ա. Հակոբյանը ներկայացրեց կատարված աշխատանքները և մոնիտորինգի արդյունքները:

Առողջապահության ոլորտում ծրագրի փորձագետ Աշոտ Մելքոնյանը հանգամանորեն ներկայացրեց առողջապահության բնագավառում առկա և հնարավոր կոռուպցիոն ռիսկերը՝ նշելով, որ ծրագրի շնորհիվ հաղթահարվեց «պահպանողական պատնեշը»: Մոնիտորինգի արդյունքում ի հայտ են եկել համակարգային խնդիրներ, և միայն համակարգային խնդիրների լուծման միջոցով է հնարավոր նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:

Խմբավորված ներկայացվեցին ոլորտի կոռուպցիոն ռիսկերը և առաջարկություններն ու կատարված աշխատանքները: Էական խնդիրներ են բժշկատնտեսագիտական չափորոշիչների բացակայությունը, նորմատիվային բազայի բացակայությունը, կադրային ուռճացվածությունը, իրազեկության պակասը:

Ստացիոնարից դուրս գրվող հիվանդը երկու ամիս անվճար դեղորայքով ապահովվելու իրավունք ունի, բայց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրեթե ոչ մի հիվանդ այս իրավունքից չի օգտվում անհիրազեկության պատճառով: Առաջարկվել է հիվանդին հիշեցման թերթիկ տալ, որ նա տեղյակ լինի իր իրավունքներին:

Ա. Մելքոնյանը հայտնեց, որ առողջապահության համակարգի պահպանողական լինելու պատճառով չնչին փոփոխություններ են կատարվել: Քանի որ կոռուպցիան նման է «բազմագործուն սարդոստայնի», գործիքներն էլ չէին կարող միատարր լինել. դրանք են՝ դիտարկման աղյուսակներ, տեղեկանքներ, հարցումներ, որոնք համադրվեցին՝ վերջնական ցուցանիշներ ստանալու համար:

Այնուհետև Ա. Մելքոնյանը ներկայացրեց առողջապահության ոլորտի չորս հիմնական տիրույթներում առկա խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունները:

1. Պոլիկլինիկական համակարգում անվճար արտոնյալ պայմաններում դեղերի տրամադրման տիրույթում կոռուպցիոն ռիսկի հիմք էր այն, որ պոլիկլինիկաները հնարավորություն ունեին դեղորայք կուտակել: Կառավարության որոշման համաձայն՝ հիվանդն անվճար էր ստանում անհրաժեշտ դեղորայքը. ծրագրի փորձագետներն առաջարկեցին սա փոխարինել դեղատան հետ պայմանագրեր կնքելու համակարգի ներդրմամբ, քանի որ հնարավոր չէ նախապես իմանալ անհրաժեշտ դեղերի ցանկն ու այն կուտակել: Կամ, օրինակ, ստացիոնարից դուրս գրվող հիվանդը երկու ամիս անվճար դեղորայքով ապահովվելու իրավունք ունի, բայց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրեթե ոչ մի հիվանդ այս իրավունքից չի օգտվում անհիրազեկության պատճառով: Առաջարկվել է հիվանդին հիշեցման թերթիկ տալ, որ նա տեղյակ լինի իր իրավունքներին:

Որպես ծնողներից կատարվող դրամահավաքի առավել քաղաքակիրթ ձև, որն ապահովում է դրամահավաքի կամավորության սկզբունքի գերակայությունը, առաջարկվում է «դրամը հանձնել դպրոցի հաշվապահությունը կամ վճարել դպրոցի բանկային հաշվին»՝ արգելելով դրամահավաքի այլ ձևերը:

2. Պետպատվերի շրջանակներում գործունեության տիրույթում ևս խնդիրներ կան՝ բուժման տեխնոլոգիաների, որակի չափանիշների առնչությամբ: Բուժհիմնարկներում պետպատվերն իրականացվում է սոցիալական ցուցմամբ և բժշկական ցուցմամբ. կոռուպցիոն ռիսկերը կենտրոնանում են բժշկական ցուցմամբ իրականացվող պետպատվերի շրջանակներում անվճար սպասարկման տիրույթում:

Հիմնական ծառայությունների ցանկի կրճատումը կարող է վերացնել ռիսկը:

3. Վճարովի գործունեության տիրույթում չլուծված համակարգային խնդիրներ կան, որոնց լուծումը պարտադիր ապահովագրական համակարգի ներդրումն է: Վճարովի գործունեության ոլորտում գները որոշվում են կամայականորեն, առանց տնտեսագիտական հիմնավորումների:

4. Կադրային քաղաքականության տիրույթում փորձագետներն առաջարկել են մրցութային կարգ սահմանել: Երբեմն մեկ դրույքը բաժանվում է մի քանի աշխատողների միջև, որը հանգեցնում է թերզբաղվածության, հետևաբար՝ որակի խաթարման:

Կրթության ոլորտի կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ծրագիրն ուղղված էր առավելապես դպրոցի առօրյա խնդիրներին՝ ավարտական քննությունների տիրույթին և դպրոցի ֆինանսական հարցերին: Մրցութային քննություններում թեստային համակարգի առավելությունը նշելով՝ կատարվել են թեստային քննությունների նկատմամբ դիրքորոշումների համալիր բարելավման նպաստելուն ուղղված մի շարք առաջարկություններ: Դրանք են.

ա. հանրակրթության ոլորտում ընդլայնել թեստային քննությունների կիրառումը.

բ. թեստային քննությունների կիրառումն սկսել տարրական դպրոցից.

գ. բարելավել թեստերի որակը՝ խուսափելով երկիմաստություններից.

դ. թեստային խնդիրները դասակարգել ըստ բարդության և դրան համապատասխան որոշել խնդիրների լուծման համար տրվող միավորները.

ե. իրականացնել նպատակասլաց և համալիր քարոզչություն՝ ուղղված քննությունների նկատմամբ քաղաքացիական հասարակության չկողմնորոշված հատվածին.

զ. ստեղծել ուսումնական հեռուստահաղորդաշարեր՝ աշակերտներին մեթոդաբար և համակարգված ձևով թեստային քննություններին նախապատրաստելու համար:

Դպրոցի ֆինանսական խնդիրներին վերաբերող փորձագիտական առաջարկություններից է՝ դպրոցի կանոնադրության մեջ ամրագրել ծնողներից կատարվող դրամահավաքի սկզբունքներն ու ձևերը: Որպես ծնողներից կատարվող դրամահավաքի առավել քաղաքակիրթ ձև, որն ապահովում է դրամահավաքի կամավորության սկզբունքի գերակայությունը, առաջարկվում է «դրամը հանձնել դպրոցի հաշվապահություն կամ վճարել դպրոցի բանկային հաշվին»՝ արգելելով դրամահավաքի այլ ձևերը:

Վերջում մասնակիցները տեղեկացվեցին, որ զեկույցի նախագիծը կհրատարակվի, և թե մասնակիցները, թե՛ յուրաքանչյուր քաղաքացի կարող է հանդես գալ առաջարկներով, որոնք փորձագետները հաշվի կառնեն զեկույցի վերջնական տարբերակում: «Իրավական մշակույթը» պատրաստ է անդրադառնալ այս առթիվ ընթերցողների հնարավոր արձագանքներին:

Ովքե՞ր և ինչպե՞ս են դաստիարակում մեր երեխաներին

Ամիսներ առաջ Վանաձորի միջնակարգ դպրոցներից մեկի 8-րդ դասարանում մի «արտակարգ պատահար» եղավ, որ ցնցեց դպրոցի ուսուցչական կոլեկտիվին և աշակերտների ծնողներին: Իսկ պատահել էր հետևյալը: Աշակերտներից մեկը դասի ժամին նմանակել էր կատվի՝ «մյաու»: Դասը վարող ուսուցչուհին խստորեն հարցրել էր՝ ո՞վ էր: Պատասխան չստանալով՝ ուսուցչուհին դասն ընդհատել էր. «քննությունը» շարունակվել էր մի քանի օր, մինչև «հանցագործը», վերջապես, խոստովանել էր իր «մեղքը»:

Հիմա ընթերցողը զարմացած կհարցադրի. իսկ ի՞նչ կա այդ անմեղ «մյաու»-ի մեջ, որ այդքան կրքեր է բորբոքել. միջադեպի նախօրեին Հայկական առաջին հեռուստաալիքի «32 ատամ» հաղորդաշարով ցուցադրվել էր մի նողկալի տեսարան՝ շնացող «կատուների» կատարմամբ:

Վերջերս էլ՝ նոր եթերաշրջանի բացման օրը, նրանք, իրենց բնորոշմամբ, նոր անակնկալ մատուցեցին հեռուստադիտողին՝ ուղիղ եթերում ցուցադրելով ծեծկռտուքի մի աննախադեպ դրվագ:

Ուզում եմ թերթի միջոցով դիմել նրանց: Պարոններ՛ն «32 ատամ»-ականներ, եթե հեռուստադիտողին չեք կարող որևէ խելացի անակնկալ մատուցել, նմաններն էլ մի՛ ցուցադրեք. դրանցից լիուլի հագեցած ենք: Երևանի, Գյումրիի, Վանաձորի և հանրապետության այլ բնակավայրերի փողոցներում հաճախ ականատես ենք լինում ավելի «էլիտար» ծեծկռտուքների՝ ինքնաձիգներով ու ջիպերով: Այնպես որ ցածրորակ անակնկալներով հազիվ թե զարմացնեք հեռուստադիտողին:

«32 ատամ»-ը միակ հաղորդաշարը չէ, որ նման «արտակարգ պատահարներով» «հարստացնում է» մեր երեխաների երևակայությունն ու «կրթում» նրանց. ետ չի մնում նաև «Կարգիկ հաղորդում» հաղորդաշարը:

Հարկ է նշել, որ նման հաղորդաշարերի զոհը հիմնականում անչափահասն է: Այսպե՞ս ենք մեր երեխաների մեջ սերմանում բարոյականության սկզբունքները, մեր ավանդապաշտության չափանիշները:

Սրանք անմեղ կատակներ չեն: Անչափահասները դրանք ընկալում են ուղղակիորեն, առանց վերլուծելու, առանց անհրաժեշտ ու ճիշտ եզրակացություն անելու: Նրանց եզրահանգումը մեկն է. կա՛ այսպիսի երևույթ, և այն կարելի է ընդօրինակել, քանի որ նույնիսկ ցուցադրվում է հեռուստատեսությամբ:

Իսկ հեռուստատեսության լեզու՞ն: Հաճախ ուղղակի ամաչում եմ այդպիսի «հայերենի» համար, քանզի մեր ոսկեղենիկ մայրենին անխղճաբար աղավաղում են: «Արա՛», «տո՛» և նման բառերն ու բառակապակցությունները «զարդարում են» մեր հեռուստաթերը:

Հաճախ դժգոհում ենք, որ հայկական հեռուստաալիքները հեղեղված են արտասահմանյան ցածրորակ հեռուստաթերիալներով: Դժգոհությունը տեղին է: Բայց «Վերվարածները ընտանիքում» հայկական հեռուստասերիալը դիտելիս ցավով մտածում եմ՝ նախընտրելի է արտասահմանյանը. դրանցում գոնե նման գռեհկաբանություններ չկան (ի դեպ, ոչ մի բառարանում չեք գտնի «վերվարած» բառը): Մի՞թե կարելի է կենցաղային, առտնին գռեհկաբանությունները հեռուստաէկրան բարձրացնել: Նշենք, որ Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի պիեսներում էլ են շոշափվում կենցաղային թեմաները, բայց խոսքի ինչպիսի՜ մաքրություն, խնդիրների ի՜նչ խորքային լուծումներ: Սրանք պետք է չափանիշ լինեն մերօրյա ստեղծագործողների համար, ոչ թե իրենց բիզնես նկրտումներն իրագործելու ձգտումները:

Շատ է իջեցվել նշածողը, պարոններ՛ն: Դե՛, ուսուցիչներ՛ն ու ծնողնե՛ր, այս ցածրորակ միջավայրում երեխա ազատիարակեք:

Ի՛ դեպ, երբեմն որպես բացասական երևույթ ենք մտաբերում խորհրդային իշխանության տարիներին գործող գրաքննությունը: Բայց ի՞նչ է մեզ տալիս այսպիսի խոսքի ազատությունը, ավելի ճիշտ՝ ամենաթողությունը: Գրեթե բոլոր ալիքներով երեխաներն ունկնդիրն ու ակնդիրն են կիսամերկ աղջիկների, հայերենի հետ առնչություն չունեցող գռեհիկ արտահայտությունների, դերասանական անճաշակ կատարումների, անհեթեթ, անիմաստ խոսքերով երգերի: Չմոռանանք նաև հեռուստաէկրանը հեղեղած սարսափ և էրոտիկ ֆիլմերի մասին, որ մեր սերունդների մեջ դաժանություն և անբարոյականություն են սերմանում: Գուցե սա արևմուտքի կազմակերպած քաղաքականության հետևողական իրականացումն է՝ մշակույթի բարոյալքմամբ քայքայել մեր հոգեկերտվածքը, դրանով էլ՝ երկիրը: Կամ գուցե մեր նորելուկ «տաղանդների» ինքնահաստատման նկրտումների հետևանքն է: Սակայն այսպես՝ մինչև ե՞րբ:

ՀՀ Կառավարությունը, Մշակույթի նախարարությունը, ստեղծագործական միությունները, Լեզվի պետական տեսչությունը պետք է անհապաղ վճռական պայքար ծավալեն հեռուստատեսությամբ հեռարձակվող նման խոտանի, ավելի խիստ՝ ազգադավ, ազգակործան երևույթի դեմ, այլապես հետո անդառնալիորեն ուշ կլինի:

ՋԱՆԻԲԵԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԵՐԴՎՈՒՄ ԵՄ ԿՐԵԼ ՔԵԶ ՇՆՉՈ՛ՎՍ...»

Ս. Կապուտիկյան

Հինգերորդ դարի սկզբին՝ Արշակունյաց թագավորության անկումից հետո, Հայաստանը բզկտվում էր՝ դառնալով ասպատակողների ու հրոսակների ոտքի կոխան: Ազգային դիմագիծը պահելու և իր գոյությունը հարատև դարձնելու ամենահուսալի զենքը մայրենի լեզուն էր, իսկ այն հարատև դարձնելու միակ միջոցը՝ ազգային գիրը:

Մեր գոյության և հարատևության խորհուրդը մեր մեծասքանչ լեզուն է, մաշտոցյան գիրը, որ հնարավորություն տվեց հայ ժողովրդին իր հոգևոր գանձերը փոխանցել դարեդար, անցյալը կապել ներկայի, ներկան՝ գալիքի հետ:

Իսկ ինչքանո՞վ է այսօր պահպանվում հայ ժողովրդի հոգևոր և լեզվական անաղարտությունը: Թվում էր՝ երկրի անկախության հետ դպրոցներում ազգային դիմագիծն ավելի շեշտվեց, հայեցի կրթությունն առաջնային կարևորություն ստացավ:

Մինչդեռ, ցավոք, անկախ Հայաստանում քաղաքական օտարամոլությունը չվերացավ: Նվաստացնելով մայրենին, օտար լեզուները փառաբանելով՝ որոշ քաղաքներ մայրենիի անաղարտության ջատագովներին մեղադրում են ազգայնականության մեջ:

Լեզվի տիրապետման լավագույն շրջանը մանկությունն է: Գիտնականներին անգամ զարմացնում է այն իրողությունը, թե մանուկներն ինչքան հեշտ են խոսել սովորում: Ռուս գրող Կոռնեյ Չուկովսկու համոզմամբ, «երկու տարեկանից սկսած՝ յուրաքանչյուր երեխա կարճ ժամանակով դառնում է հանճարեղ լեզվագետ, իսկ հինգվեց տարեկանից հետո կորցնում է այդ հանճարը»: Նշանակում է՝ երկու-երեք տարեկանում երեխան, ինքն էլ չնկատելով, թեթևորեն ու առանց ճիգի յուրացնում է այնքան բառ, որքան չափահաս մարդը երբեք չի կարողանա: Մանկության այս շրջանը լեզու սովորելու ամենաբուռն շրջանն է, որին հաջորդում է լեզու սովորելու գիտակցական շրջանը: Լև Տոլստոյը զուր չի ասել, թե մինչև հինգ տարեկանն ինքն ավելի շատ բան է սովորել, քան ամբողջ կյանքում:

Ուրեմն, սիրելի՝ հայ մայրեր, դուք պետք է օգնեք ձեր զավակներին այդ դժվարին ճանապարհին՝ նրանց համար լեզվական հարուստ, գեղեցիկ և հայեցի միջավայր ստեղծելով, քանզի թերարժեք է միայն օտար լեզվով տրված լուսավորությունը: Դրանով դուք ձեր զավակներին կհեռացնեք ձեզանից:

Հայոց գենը, սակայն, հավերժական է ու հզոր: Օրինակ՝ հայ հասարակական գործիչ, բժիշկ Գևորգ Ռևիզյանի որդին՝ գրականագետ Բորիս Ռևիզովը շուրջ կես դար մտածել, գրել ու խոսել է ռուսերեն՝ համարվելով այդ լեզվի հմուտ գիտակ:

Բայց պատահում է անսպասելին: Մահից չորս ամիս առաջ նա կորցնում է հիշողությունը և ռուսերեն խոսելու և հասկանալու ունակությունը: Հիվանդանոցում նա բառեր էր թոթովում, որ անհասկանալի էին ռուս բժիշկների համար. ես լսեցի մի անուշ ձայն,

Իմ ծերացած մոր մոտ էր:

Արթնացել էր հայկական գենը. կյանքի վերջին չորս ամսվա ընթացքում Բորիս Ռևիզովը խոսեց բացառապես հայերեն և այդպես էլ կյանքին հրաժեշտ տվեց հայերեն խոսելով:

Իսկապես, լեզուն սոսկ լեզու չէ: Լեզվի մեջ մարմնացած է ժողովրդի ոգին, և ճշմարիտ է Կոմիտասի բնորոշումը. «Հայ լեզուն ունի հատուկ հնչավորություն և համապատասխանող երաժշտություն, իսկ յուրաքանչյուր հնչյունի մեջ բովանդակում է հոգեկան կյանքի որևէ գիծը»:

Հայ գրի և արվեստի համար ծով արյուն են թափել մեր նախնիները: Բազմաթիվ են դեպքերը, երբ ասպատակությունների ու գաղթի ժամանակ նրանք ոչնչացումից փրկել են նախ և առաջ հայերեն ձեռագրերը:

Այդպես 1915 թվականի Մեծ եղեռնի օրերին որբացած Կարապետ Դավթյանի (բանասիրական գիտությունների թեկնածու) մահամերձ մայրը հացի փոխարեն որդու ուսապարկի մեջ հայերեն գրքեր է դրել. «Մի բան կգտնի, կուտի,- մտածել է նա,- կարևորն այն է, որ ազգությունը չփոխի»: Մատյան փրկողն ազգուրաց չէր կարող լինել: Իրոք, մոր կանխատեսումն իրականացավ. տղան դարձավ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, իսկ նրա փրկած ձեռագիր մատյանն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում:

Ժողովրդի անմահության գաղտնիքը նրա լեզվի մեջ է: Մահվան ճիրաններում հայտնված հայ մայրերը Դեր-Զորի ավազների վրա հայոց տառերն էին ուսուցանում իրենց սովալլուկ մանուկներին:

«Եթե բոլոր մայրերը այնքան հայրենասեր և ազգասեր լինեն, որ իրենց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտի մեջ ազգային պատվասիրություն ձգեն, հայրենիքի սեր, էլ այնուհետև ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ»,- համոզված էր Ղազարոս Աղայանը:

Ասում են՝ ով ինչքան լեզու գիտի, այնքան մարդ է, սակայն լեզուների իմացությամբ հպարտանալու իրավունք չունի նա, ով չգիտի իր մայրենին: Ինչպես Վ. Փափազյանն է գրել, մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում: Տիրապետելով ութ օտար լեզուների՝ նա այն համոզմանն է եղել, որ հելլեն, լատին և արաբ լեզուներից ավելի հնչեղ և հարուստ է մեր լեզուն: Դիպուկ են բնորոշել մեր մեծերը, որ մայրենի լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

Մեր լեզուն մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:

Հ. Սահյան

Այսօր ցավ եմ ապրում, երբ պատանիների և երիտասարդների շուրթերից լսում եմ աղավաղված հայերեն, նրանց, ում հետ կապում ենք մեր երկրի հույսն ու ապագան: Եվ կարծում եմ՝ նախ նրանց հոգին պիտի դաստիարակենք, նոր միայն մշակենք խոսքի, լեզվի կուլտուրան, քանի որ մարդու լեզուն և բնավորությունը կապված են միմյանց հետ: Խեղաթյուրված խոսքը իր դրոշմն է դնում հոգու վրա:

Շատ երիտասարդներ չեն գիտակցում, որ ժարգոնային տարրերով «համեմված» խոսքը կարող է տգեղացնել, իսկ անաղարտ լեզուն՝ զարդարել մարդուն: Տեղին է հիշատակել Լևոն Հախվերդյանի խոսքը. «Ի՞նչ եք կարծում, ոչ գեղեցիկ, բայց բարեկիրթ դե՞մքն է լավ, թե՞ շատ գեղեցիկ, բայց անկիրթ, հոգու նրբության հետք չունեցող դեմքը»:

Հետաքրքիր է նաև գրող Լ. Կասիևի հետևյալ կարծիքը. «Եթե վաղ թե ուշ մարդ չազատվի լեզվական աղտից, վերջիվերջո, դա կապականի նաև նրա հոգին»:

Բժշկական գործունեության ուղեգիր ստանալուց առաջ ապագա բժիշկները երդում են տալիս բժշկության հայր Հիպոկրատին: Իսկ ու՞մ պիտի երդվեն մեր մայրենիի ապագա մշակները՝ ուսուցիչն ու դասախոսը, գրողն ու լրագրողը, ասմունքողն ու դերասանը, հաղորդավարն ու թարգմանիչը՝ բոլոր նրանք, ովքեր կոչված են հղկելու ու հարստացնելու մեր լեզուն, պահպանելու ու պաշտպանելու նրա անաղարտությունը: Մինչդեռ պետք է երդվել այնպես, ինչպես Ս. Կապուտիկյանը.

«Երդվում եմ, շուրթերովս բորբոք պահել քո կրակը, շքանշանի պես կրել քո ոսկին, լցվել քո լույսով ու քնքշությամբ...

Երդվում եմ...

Երդվում եմ կրել քեզ շնչո՛վս, արյունո՛վս, այրումո՛վս և ինձնով տանել-հաղորդել զավակներիս քո հավերժական կենդանությունը:

Երդվում եմ...»:

ՄԱՐԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Դերասանուհի, Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի դասախոս

Ոճպրա ՄՈՐԻ ԹԱՌՈՅԱՆ

***

Է՛յ, դու՛, մուրացի՛կ,
կարոտդ թաղիր
մաշված գլխարկիդ
խավարի մեջ:
Կամաց հառաչի՛ր,
թաքուն արտասվի՛ր,
բա՛ րձր ծիծաղի՛ր,
որ գրպաններումդ
շիտիվեն բոլոր գրոշները:

***

Իրերը հնչում են ազատ,
քանզի տիրում են մեզ:
Փոշիների մեջ կա Հավերժի
ծաղր...
Հիսու՛ս, իմ Հիսուս,
Տու՛ր ինձ զորություն
Հասկանալու համար
Քո տառապանքն անհուն,
տու՛ր ինձ իմ ինքնությունը,
տու՛ր ինձ իմ ես-ն անաղարտ:

***

Գնդակով
ծակոտված զինվորները
Հերոսներ են:
Մեծարե՛ք նրանց:
Մի պահ լուեցնենք
հոգիների մեջ
ցնցվող ու ձգվող
գերության շղթան:

***

Ես ծնվել էի իբրև
մեղեդի մի ջինջ,
սակայն կանացի մի պատկեր
նկարվեց իմ դեմքին
և մի զույգ աչքեր,

որ ես կուրանամ
մարդկային էության
կորստյան ամոթից ու վշտից...

***

Գարուն է արդեն:
Խոտերը դեռատի
դեռ մրսում են:
Քո հոգով կանացի
երազում էիր՝
լինել բնության նման
անզոր ու հզոր,
շոյալ ու գեղեցիկ...

***

Ապակեպատ պատկեր,
քույրը գրկել էր
եղբորը փոքրիկ
և լցված աչքերը
Հառել էր փողոցին:
Որոնում էր մորը:
Հուսահատվել էր
խեղճ սպասումը...
Քրտնել էր
անտարբեր ապակին:

***

Անտառը Հեկեկում է,
անտառը ծերանում է
անժամանակ:
Ծաղիկները
ժխտում են
եռմահու
Հիշատակներն այս
սրածայր...
ու տրորված
խոտերն աղաղակում են:

***

Այս
առասպելը՝
արնաներկ ու դաժան,
ես չեմ Հորինել,
բայց թվում է, թե
իմ մատներն էլ են
շոշափել զենքն այն,
որն սպանում էր...
Եվ ձեռքերն այդ
ծափահարում են:

Նկարները՝ Մորի Թառոյանի

Հոգևոր

Գ-ՅՈՒՏ ԽԱՉԻ ՏՈՆԻ ՀԱՄԱՏԱՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կլավդիոս հռոմեացի կայսեր կինը՝ Պատրոնիկեն, մկրտվելով Պետրոս առաքյալի ձեռքով, նրա իսկ խորհրդով իր ուստրերի և դուստրերի հետ երուսաղեմ է գալիս՝ սուրբ վայրերի տեսության: Այստեղ հանդիպում է Հակոբոս Տյառնեղբորը, ով առաքյալների կողմից Երուսաղեմի եպիսկոպոս էր կարգված, հարցնում Փրկչի խաչափայտի մասին և Հակոբոսից իրազեկ դառնում, որ հրեաներն այն թաքցրել են Քրիստոսի գերեզմանում՝ հրաշքներ գործելու պատճառով, որպեսզի չլինի թե որևէ մեկը հավատա Խաչին և խաչյալ Քրիստոսին: Արդարև, Քրիստոսի խաչելությունից, հարությունից և երկինք համբարձվելուց հետո փրկչական խաչափայտն անխնամ նետված էր Գողգոթայի բարձունքում՝ իբրև մահապատժի գործիք. այնտեղ էին նաև ավազակների խաչերը:

Գարնանային մի օր, երբ երեխաները վազվզում էին և ծաղիկներ հավաքում, նրանցից մեկը, որ ի ծնե կաղ էր և դժվարությամբ էր հետևում ընկերներին, պատահաբար հպվելով Քրիստոսի խաչափայտին, բժշկվում է, բայց չի կարողանում հիշել, թե որ խաչափայտին է հպվել:

Այդ օրվանից ամեն գիշեր խաչափայտերի վրա ճառագող լույս է երևում, և շատ հիվանդներ բժշկվում են իրենց տկարություններից: Հրեաներն, այս տեսնելով, խաչափայտերը վերցնում և դնում են տաճարի «գեղեցիկ» կոչվող դռան մոտ: Փրկչական խաչափայտն այստեղ էլ է հրաշքներ գործում. մի անդամալույծ մուրացկան, պատահաբար հպվելով նրան, բժշկվում է: Այս անգամ հրեաները խաչափայտը դնում են Քրիստոսի գերեզմանի մեջ՝ գերեզմանի վրա կանգնեցնելով Աֆրոդիտեի արձանը, որ խաչի գործած հրաշքները վերագրեն կուռքին:

Պատրոնիկե կայսրուհու հրամանով գերեզմանը բացում են և գտնում խաչափայտերը: Մինչ տարակուսանքի մեջ էին, թե որն է փրկչական խաչը, կայսրուհու դուստրը հանկարծամահ է լինում. նրա կենդանացմամբ էլ որոշվում է Փրկչական խաչը:

Սուրբ վայրերը տեսնելուց և իր ուխտն ավարտելուց հետո Պատրոնիկեն, Հակոբոսից խաչափայտի մասունք վերցնելով, վերադառնում է Հռոմ: Այս մասունքն է, որ սերնդից սերունդ անցնելով՝ հասնում է Հռիփսիմե կույսին, ով այն հետագայում թաքցնում է Հայաստանում՝ Վարագ լեռան վրա:

Կլավդիոս կայսեր և Պատրոնիկե թագուհու մահից հետո հրեաները Տիրոջ խաչը մյուս խաչերի հետ նետում են Գողգոթա լեռան վրա՝ վայրը վերածելով աղբանոցի:

313 թ. Միլանի հրովարտակով Հռոմեական կայսրության տարածքում քրիստոնյաներին ազատություն է տրվում ազատորեն դավանել քրիստոնեությունը: Երուսաղեմը դառնում է ուխտավայր: Կոստանդինանու կայսեր մայրը՝ Հեղինեն, Աստծուց տեսիլքով հրաման է ստանում գնալ Երուսաղեմ, գտնել փրկչական խաչը և տաճարներ կառուցել:

327 թ. Հեղինեն գալիս է Երուսաղեմ: Աստծո շնորհով թագուհին գտնում է երեք խաչափայտերը և անգամ Պիղատոսի ձեռքով գրված եռալեզու տախտակը, որ պոկվել էր խաչից: Երբ խաչերից մեկը մոտեցնում են մի հիվանդ կնոջ, նա առողջանում է, մի մահացած պատանի է կենդանանում նույն խաչի օգնությամբ: Այսպիսով իմանում են, թե որն է Տերունական խաչը: Հեղինե թագուհին Գողգոթայի վրա կառուցում է Սուրբ Հարություն տաճարը և խաչն այնտեղ բարձրացնում՝ ի ցույց Ժողովրդի:

Խաչն, այլևս փրկչական լինելով, պատվելի է մեզ՝ քրիստոնյաներիս համար (Գաղ. 3:24): Խաչը դարձավ եկեղեցու համար սրբության, փրկության և արդարության նշան (Հովի. 3:14, Իմաստ. 14:7): Խաչը «կենաց ծառ է բոլոր նրանց համար, ովքեր ապավինում են նրան և վստահությամբ հենվում նրա վրա, ինչպես Տիրոջ վրա» (Առակ. 3:18): Խաչը նախակարապետն է Քրիստոսի երկրորդ գալստյան (Մատթ. 24:30): Քրիստոսի խաչով, այսինքն՝ Նրա չարչարանքների մասին վերհուշով զղջում և Աստծո նկատմամբ հավատ ու սեր է առաջանում մեր սրտում: Քրիստոսի խաչով գտնում ենք Խաչյալին: Քրիստոսն Իր արյունը հեղեց խաչի վրա, և խաչը դարձավ այն զոհասեղանը, որի վրա թափված արյունով սրբվեց մարդկության մեղքը: Խաչն այն եղեմական կենաց ծառն է, որից կյանք հորդեց դեպի մեղավոր մարդը: Այն երկնքի արքայության բանալին է: Ինչպես սուրբ Գրիգոր Տաթևացին է ասում, «խաչը գերեզմանների կնիքն է և կյանքի հարությունը»:

Եվ թող Սուրբ Խաչի զորությամբ ոգևորված՝ մենք՝ ամենքս, պարծենանք Քրիստոսի պարգևած անճառելի փրկությամբ և միանանք երկնային հավիտենական օրհներգություններին՝ ասելով. «Թող Քո Խաչը լինի մեզ ապավեն, ո՛վ Տեր Հիսուս, երբ երևաս Դու Հոր փառքով լուսավոր ամպերի միջից, այնժամ մենք՝ Քեզ հուսացածներս, չեքք ամաչի, այլ Քո մեծ զորությամբ կբերկրենք Քո աջակողմում՝ որպես որդիներ լույսի և որդիներ ցերեկվա» (Ժամագիրք):

Տեր Սմբատ քահանա Սարգսյան
Կոտայքի մարզի Առինջ գյուղի Սբ. Աստվածածին և Սբ. Հովհաննես եկեղեցիների հոգևոր հովիվ

Եփեսոսի յոթ սուրբ մանուկների հնչման և հարության պատմությունը

Եփեսոսում Դեկոս ամբարիշտ կայսեր (249-251) հալածանքների տարիներին ապրում էին յոթ մանուկներ: Իշխանների որդիներ էին՝ երիտասարդ, բարետես և վայելուչ, որոնց անուններն են՝ Մաքսիմիանոս, Մարտիանոս, Ամղիքոս, Դիոնիսիոս, Կոստանդինոս, Անտոնիոս և Հովհաննես: Պատահեց այնպես, որ նրանք հավատացին Քրիստոսին և մկրտվեցին: Սրա մասին իմանալով՝ թագավորն սկսում է նրանց հետապնդել, որ ուրանան Քրիստոսին և կուռքերին զոհ մատուցեն: Կայսրը, չկարողանալով մանուկներին ենթարկել իր կամքին, հրամայում է ծնողների ներկայությամբ գանակոծել նրանց. գուցե զղջան, կամ էլ ծնողներին հաջողվի համոզել, որ կուռքերին զոհ մատուցեն: Բայց հեռանալով՝ նրանք բնակություն են հաստատում մոտակա Ողքոս լեռան այրերից մեկում: Ամեն օր ժիր ու ճարտար Ամղիքոսին ուղարկում էին քաղաք՝ հաց գնելու և նորություններ իմանալու համար:

Մի օր հաց գնելու եկած Ամղիքոսը տեսնում է, որ խոշտանգում են Քրիստոսին հավատացողներին. ում սպանում էին, գլուխը ձողի վրա ցցելով՝ կանգնեցնում էին քաղաքի դռներից դուրս: Շատերին տեսնում է կախաղան հանված, ուրիշներին՝ մորթազերծ արված, ոմանց էլ՝ խոշտանգված: Ամղիքոսը վերադառնում է ընկերների մոտ՝ նրանց պատմելով քաղաքում տեսածը: Հացն ուտելով՝ գոհանում են, ապա աղոթում Աստծուն, որ դադարեցվեն քրիստոնյաների հալածանքները: Հետո նրանք ննջում են և մարմնական քուն մտնելով՝ հոգիներն ավանդում Աստծուն:

Երբ Դեկոս կայսրն իմանում է մանուկների թաքստոցի տեղը, հրամայում է այրի մուտքը մեծ քարերով փակել, որ այդտեղ էլ սովամահ լինեն, քանզի կարծում էր, թե կենդանի են: Այրի մուտքը փակելիս Թեոդորոս և Ռուփինոս իշխանները, որ քրիստոնեության գաղտնի հետևորդներ էին, մի տախտակի վրա գրում են նրանց անուններն ու իրադարձությունների ժամանակը. «Եվ թե Քրիստոսի հավատքի համար այստեղ՝ այս այրում, հալածանքների ենթարկվելով, սովամահ եղան»: Տախտակը դնում են վեմի վրա և գնում թագավորի մոտ:

Անցնում են տարիներ. գալիս է Թեոդորոս Մեծ բարեպաշտ և ուղղափառ թագավորի ժամանակը…

Նրա օրոք ի հայտ են գալիս հերձվածողներ ոչ միայն աշխարհականների, այլև եպիսկոպոսների և նշանավոր մարդկանց շրջանում, որոնցից էին Թեոդորոս և Գայիոս երուսաղեմացիները, որ ասում էին, թե «հողեղեն մարմնին չկա հարություն»: Թեոդորոս Մեծը, ինչպես բոլոր ուղղափառ քրիստոնյաները, խիստ մտահոգված էր և վշտացած չար աղանդների պատճառով: Սակայն ամենագութ Աստված իշխաններից մեկի սրտում միտք է հղացնում, որ բանա յոթ մանուկների այրը՝ այն ոչխարների փարախ դարձնելու համար: Մինչև երեկո իշխանի ծառաները քանդում են շինությունը, սակայն ներս չեն մտնում, այլ տուն են վերադառնում՝ այրի մաքրելը թողնելով հաջորդ օրվան:

Նույն առավոտյան Աստված յոթ մանուկների հոգիները վերադարձնում է իրենց մարմինները: Արթնանալով նրանք կարծում են, թե ննջել էին նախորդ երեկոյան: Ապա սովորականի պես Ամղիքոսին ուղարկում են քաղաք՝ հաց գնելու և տեղեկանալու, թե ինչ է խորհում իրենց մասին Դեկոս թագավորը: Ամղիքոսը, ծածկելով երեսը, որ ոչ ոք իրեն չճանաչի, հասնում է քաղաք, ուր տեսնում է այլափոխված շինություններ, Քրիստոսի խաչի սուրբ նշանը բացահայտ դրված, լսում է ժամհարի ձայնը, մարդկանց տեսնում խաչակնքվելիս և Հիսուս Քրիստոսի անունով երդվելիս: Այս ամենով հիանալով՝ շշնջում է. «Երեկ այս նշանը գաղտնի էր, իսկ այսօր հայտնի: Ի՞նչ է եղել արդյոք»: Քաղաքի շուրջը ման գալով՝ ամենուր նույնն է տեսնում ու լսում: Մի մարդու հարցնում է, թե այս քաղաքը Եփեսոսն է, վերջինս պատասխանում է՝ այո՛, Եփեսոսն է: Ամղիքոսը ոչինչ չի ասում, գնում ու դրամը տալիս է հացավաճառին, մինչդեռ նա դրամը չի ճանաչում. ցույց է տալիս շուկայում գտնվող շատերին, որոնք նույնպես չեն ճանաչում: Այդժամ շրջապատում են Ամղիքոսին ու տանում բդեշխի, այնուհետ Մարիանոս եպիսկոպոսի մոտ՝ ասելով, թե նա հին գանձ է գտել: Դրամն առնելով՝ եպիսկոպոսը կարդում է Դեկոսի անունը դրամի վրա և Ամղիքոսին հարցնում, թե որտեղից է դրամը: Ամղիքոսն ասում է. «Ո՛վ մարդիկ, աղաչում եմ ձեզ, ասացեք ինձ, որտե՞ղ է Դեկոս կայսրը, քաղաքո՞ւմ է, թե՞ ոչ», նրան պատասխանում են, թե «երկրի վրա Դեկոս անունով կայսր չկա»: Այդժամ Ամղիքոսն ասում է. «Երեկ Դեկոսն այս քաղաքում էր, չարչարում էր քրիստոնյաներին, իսկ մենք փախանք նրանից, որովհետև մենք քրիստոնյաներ ենք. եթե չեք հավատում, ինձ հետ եկե՛ք, և ցույց կտամ ընկերներիս, որ Ողքոս լեռան թաքստոցում են»: Ամղիքոսի հետ եպիսկոպոսը, բդեշխն ու ժողովրդի բազմությունը գալիս են այրի դռան մոտ, եպիսկոպոսը կարդում է տախտակի վրա գրվածը: Մտնելով այր՝ տեսնում են յոթ սուրբ մանուկներին՝ ուրախ և պայծառ դեմքերով, որոնք պատմում են ժամանակին իրենց հետ կատարվածի մասին:

Եպիսկոպոսը նամակ է գրում Թեոդորոս թագավորին հարության փառքի մասին: Թագավորը, խնդությամբ լցված, բազում մարդկանց հետ շտապում է Եփեսոս: Սրբերն ընդառաջ են գալիս՝ արեգակի պես փայլող դեմքերով, քանզի հանդերձյալ կյանքի կերպարանքով էին: Մտնելով այր՝ նստում են և խոսում թագավորի հետ. «Խաղաղությամբ մնա քո թագավորության մեջ և մի՛ երկմտիր մահացածների հողեղեն մարմնի հարության համար: Արդ, իմացի՛ր, որ քո սրտի տրտմության պատճառով Աստված մեզ ննջեցյալներից հարություն տվեց, որ մարդիկ ճանաչեն և իմանան, որ կա հարություն մարդու հողեղեն մարմնին»: Այս ասելով՝ գլուխները խոնարհում են և թագավորի առջև հրեշտակների ձեռքով հոգիներն ավանդում Աստծուն: Այնուհետ թագավորը հրամայում է սրբերի մարմինները դնել յոթ տապանների մեջ:

Այդ գիշեր սրբերը երևում են թագավորին. «Աստված մեզ հոգի՛ց հարություն տվեց, ոչ թե ոսկուց ու արծաթից, ուստի որտեղ հարություն առանք, այնտե՛ղ հանգչեցրու»: Առավոտյան փորում են նույն տեղը, ամփոփում սրբերի մարմինները՝ այն դարձնելով եկեղեցի և զարդարելով ոսկեզօծ ապակիներով: Հետո նշում են սրբերի հիշատակի օրը և եկեղեցու նավակատիքը, իսկ թագավորը վերադառնում է Կոստանդնուպոլիս մեծ ուրախությամբ՝ գոհանալով Աստծուց: Իսկ չար հերձվածողները, տեսնելով զարմանալի սքանչելիքները, նորից հաստատվում են ուղղափառ հավատքի մեջ:

Գրաբարից փոխադրեց Խորեն Մանուկյանը

ՏԵՂԵԿՈՒՅԹ - ԱԶԴ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի (ՀՍԻԿ) Մարդու իրավունքների հայկական դպրոցը հայտարարում է ընդունելություն հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման 2007-2008 թթ. մեկամյա դասընթացի համար: Դասընթացը կազմակերպվում է Եվրոպական հանձնաժողովի հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ և ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի հետ համագործակցությամբ:

Դասընթացի նպատակը իրավական առարկաների՝ «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացումն է՝ տեսական գիտելիքների և մեթոդական հմտությունների բարելավման միջոցով:

Ուսման ընթացքում սովորողներն ապահովվում են անհրաժեշտ գրականությամբ, օգտվում ՀՍԻԿ Մարդու իրավունքների գրադարանային ցանցի ծառայություններից:

Դպրոցը հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողն ստանում է վկայական իրավական առարկաների մասնագետի որակավորմամբ:

Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով:

Դիմել կարող են հանրակրթական դպրոցի այն ուսուցիչները, ովքեր.

• դասավանդում են «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները.

• սկսած 2007-2008 ուս. տարվանից՝ առնվազն 2 տարի պետք է դասավանդեն «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» ուսումնական առարկաները:

ՀՍԻԿ-ը հոգում է հետևյալ ծախսերը.

1. բնակավայր — Վանաձոր (ՀՍԻԿ գրասենյակ), Վանաձոր — բնակավայր ուղևորվածները (վճարման համար հիմք են հանդիսանում ուղեկտրոնները),
2. սնունդ,
3. կացարան:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում-հարցաթերթիկ.
- Ուսումնական հաստատության ղեկավարի կողմից տրված հարցաթերթիկ-երաշխավորագիր.
- Ինքնակենսագրություն (CV).
- Բուհի դիպլոմի պատճեն.
- Հարակից այլ դասընթացների (սեմինարների) մասնակցության վկայականների (եթե կան) պատճեններ.
- Անձնագրի պատճեն.
- 3/4 չափի մեկ լուսանկար (ֆաքսով և էլ.փոստով ուղարկված լուսանկարներ չեն ընդունվում):

Փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում դիմումը չի քննարկվում:

Դիմում-հարցաթերթիկը և հարցաթերթիկ-երաշխավորագիրը կարելի է ստանալ www.acrpc.am ինտերնետային էջից կամ ՀՍԻԿ գրասենյակից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007 թ. դեկտեմբերի 17-ը, հետևյալ հասցեով՝

Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբանցք, թիվ 2
Հեռախոս՝ (322) 22967, 44781 հեռապատճեն՝ (322) 44781
էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; apapikyan@acrpc.am

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Կրթության բաժնի վարիչ Արայիկ Պապիկյանին՝ apapikyan@acrpc.am

Մարգահովիտի կրթամարզամշակութային համալիրը միանում է ՀԿՀԿ քարոզարշավին

Վերջերս Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի կրթամարզամշակութային համալիրը (ԿՄՄՀ) միացավ ՀԿՀԿ-ի ազգային կոալիցիային: Գյուղի ԿՄՄՀ-ն իր մեջ ներառում է գրադարան, համակարգչային կենտրոն և ուսի կամավոր երիտասարդների թիմ: Համալիրի տնօրեն Սեյրան Սարդարյանը հայտնեց, որ առաջիկայում գյուղի ակտիվը նախատեսում է կազմակերպել մի շարք միջոցառումներ, իսկ 2008 թ.-ի ապրիլի 21-27-ին նախատեսված համընդհանուր գործողությունների շաբաթվա ընթացքում՝ «Դարձ դեպի դպրոց» նշանաբանով, իրենք առաջին անգամ մասնակցելու են քարոզարշավին, որին պատրաստվում են ամենայն ջանադրությամբ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԴԱՐՅԱՆ
Մարգահովիտի ԿՄՄՀ ծառայության ղեկավար

Մենք՝ քաղաքացիական հասարակությունը

Հարգելի՝ հասարակական կազմակերպություններ,

«Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը «Մենք՝ քաղաքացիական հասարակությունը» խորագրի ներքո պարբերաբար ներկայացնում է Հայաստանում գործող հասարակական կազմակերպություններին: ՀԿ-ները հնարավորության դեպքում ներկայացվում են ըստ մարզերի, այբբենական կարգով: Տվյալ մարզից այբբենական հաջորդականությանը համապատասխան որևէ ՀԿ-ի մասին տեղեկույթ չլինելու դեպքում տպագրվում է հաջորդ մարզից առաջինը պատշաճ տեղեկույթ ներկայացրած ՀԿ-ն:

Եթե ցանկանում եք՝ ձեր կազմակերպությունը ներկայացվի «Իրավական մշակույթ» թերթում, ապա խնդրում ենք ուղարկել անխախ խմբագրված տեղեկույթ ձեր հասարակական կազմակերպության, նրա առաքելության, նախատեսվող և իրականացված ծրագրերի, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների մասին:

Տեղեկույթը պետք է լինի էլեկտրոնային տարբերակով, 1-1,5 A4 էջի սահմաններում՝ Arial Armenian 10 տառաչափով: Ուղարկեցեք նաև 1-2 լուսանկար 300 dpi խտությամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եթե Դուք ցանկանում եք պարբերաբար անվճար ստանալ «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը, խնդրում ենք լրացնել սույն կտրոն-ձևաթուղթը և ուղարկել խմբագրություն

Բաժանորդ _____
ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆ կամ կազմակերպության ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հասցե _____
Մարզ, քաղաք (գյուղ), շենք (տուն), բնակարան

Հեռախոսահամար _____

էլ. փոստ _____

Բաժանորդագրվել կարելի է նաև էլ. փոստով տեղեկացմամբ՝ lc@acrpc.am, ինչպես նաև՝ զանգահարելով (0322) 2 29 67 և (0322) 4 47 81

Հարգելի՝ ընթերցող, եթե ցանկանում եք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին, խնդրում ենք լրացնել սույն ձևաթերթիկը և ուղարկել խմբագրություն: Ձեզնից ընդամենը պահանջվում է լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք:

1. Ըստ Ձեզ՝ մեր հասարակության մեջ զարգացա՞ծ է իրավական մշակույթը:
Ոչ Մասամբ Այո

2. Հասարակությունն իրազե՞կ է իր իրավունքներին:
Ոչ Մասամբ Այո

3. Թերթը խրախուսո՞ւմ է մարդու իրավունքների պաշտպանությունը:
Չի խրախուսում Մասամբ Խրախուսում է

4. Թերթն արծարծո՞ւմ է հասարակությանը հուզող հարցեր:
Ոչ Մասամբ Այո

5. Ի՞նչ թեմաների շուրջ հոդվածներ կցանկանայիք կարդալ մեր թերթի էջերում:
_____
_____

Կարող եք լրացնել նաև Ձեր տվյալները՝
անուն, ազգանուն _____ հասցե _____
հեռախոս _____ էլ. փոստ _____

Սիրելի՝ ընթերցող, լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՍԻԿ գրասենյակ՝ ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2 հասցեով: Կարելի է պատասխաններն ուղարկել նաև էլ. փոստով՝ lc@acrpc.am կամ հեռապատճենով՝ +374(322) 4-47-81:

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Գ տարի
Հիմնադիր և հրատարակիչ՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
Հասցեն էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագրի պաշտոնակատար՝ Գևորգ Մանուկյան
Խմբագիր՝ Հերմինե Բաբուռյան
Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում:
Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրապարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 2007թ.10.29:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «Շանգակ-97» հրատարակչատանը:

Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
Տարածվում է անվճար